ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4342-Ա « 24 » հոկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի Հ.778-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 03.10.2025թ. եզրակացությունը, քաղաքացի Սամվել Հովհաննիսյանի դիմումները.

1. Երևանի քաղաքապետի 2022 թվականի մարտի 4-ի «Երևանի Աճեմյան փողոցի 1-ին նրբանցքի հ.4/1 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Սամվել Հովհաննեսի Հովհաննիսյանի, Սոնա Հովհաննեսի Հովհաննիսյանի, Նվարդ Մովսեսի Անդրեասյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.778-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրից, նախաբանից, 1-ին կետից հանել «Նվարդ Մովսեսի Անդրեասյանի» բառերը.

2) Որոշման նախաբանից հանել «Նվարդ Մովսեսի Անդրեասյանի (ծնված 00.00.1949թ.)» բառերը:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ